Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 21-06-2024 թ. որոշմամբ
««ՀԻՄՆԱՏԱՎՈՒՇ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԻՄՆԱՏԱՎՈՒՇ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՇՏՈՑԻ ՊՈՂՈՏԱ 5Ա 11 ԲՆ.
1.3 Պետական գրանցման համարը		222.160.24642
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2011-06-28
1.5 ՀՎՀՀ-ն		02600539
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)11360404
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		hymnatavush2016@gmail.com
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Մարսել Կևորկյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	31	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	<<Գյուղատնտեսության զարգացում>> ծրագիր, <<Օժանդակություն Հայաստանի հանրապետությանը և Արցախին>> ծրագիր	963,241,477
	Ձեռնարկատիրական գործունեությունից մուտքեր	17,264,813
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		

Digitally signed by ARAKELYAN KARINE 7009680540
Date: 2024.06.28 16:52:01 AMT

	Չեռնարկատիրական գործունեությունից մուտքեր	10,222,222
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Տնտեսական գույք, գործիքներ	39,572,400
	Սերմեր	50,979,000
	Կերային հավելումներ, պարարտանյութ	9,767,862
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
«Գյուղատնտեսության զարգացում» Ծրագիր	437,806,965	
«Օժանդակություն Հայաստանի Հանրապետությանը և Արցախին» Ծրագիր	431,207,600	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	869,014,565	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	869,014,565	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 10 էջ

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ___10___էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ՀիմնաՏավուշ» Զարգացման Հիմնադրամ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ
31 դեկտեմբեր 2023թ.

ԵՐԵՎԱՆ 2024

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Հոգաբարձուների Խորհրդի կազմը	6
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	7
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	8
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301/307/309
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

14.06.2024թ.

N 022405

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Բեյքեր Թիլլի Արմենիա ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վ. Գևորգյան

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամի (հետայսու՝ «Հիմնադրամ») և նրա դուստր ընկերության (հետայսու՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրարելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Խումբը կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածներից:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսկան հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Խմբի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Խմբի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, աուդիտորը չի կարող երաշխավորել, որ ապագա իրադարձությունները կամ հանգամանքները չեն կարող հանգեցնել նրան, որ Խումբը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր

Մ. Պոնամարևա
14.06.2024թ.

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ՝ 2023թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Նախագահ

Պիեռ-Պետրոս Թերզեան	Հիմնադրի՝ Ֆրանսիայի Հայկական հիմնադրամի նախագահ (ի պաշտոնե)

Այլ անդամներ

Միշել-Քրիստ Փազումյան	Նշանակված Ֆրանսիայի Հայկական հիմնադրամի կողմից
Պետրոս-Միհրամ Քուրքջյան	Նշանակված Ֆրանսիայի Հայկական հիմնադրամի կողմից
Հայկակ Արշամյան	«Հայաստան» Համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն (ի պաշտոնե)
Արարատ Խլղաթյան	«Հայաստան» Համահայկական հիմնադրամի գործադիր տնօրենի շինարարության գծով տեղակալ (ի պաշտոնե)

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)

	Ծանոթ.	**2023թ.**	**2022թ.**
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	633,005	694,066
Ոչ նյութական ակտիվներ		-	357
Կենսաբանական ակտիվներ	5	109,099	98,205
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	-	1,700
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*742,104*	*794,328*
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	193,392	150,470
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	58,646	79,094
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	8	353,473	221,364
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*605,511*	*450,928*
Ընդամենը ակտիվներ		**1,347,615**	**1,245,256**
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	620,606	693,408
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*620,606*	*693,408*
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	9	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	60,866	71,401
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*60,866*	*71,401*
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		666,143	480,447
Ընդամենը զուտ ակտիվներ		*666,143*	*480,447*
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		**1,347,615**	**1,245,256**

Մարսել Կեորկյան

Գործադիր տնօրեն

14.06.2024թ.

Կարինե Առաքելյան

Գլխավոր հաշվապահ

1-23 ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծանոթ.	**2023թ.**	**2022թ.**
Գործունեությունից եկամուտ	11	1,376,544	1,575,240
Անհատույց օգնության գծով ծախսեր	12	(506,670)	(931,212)
Գործունեությունից ծախսեր	13	(457,987)	(621,940)
Վարչական ծախսեր	14	(223,090)	(241,408)
Գործառնական գործունեությունից արդյունք		**188,797**	**(219,320)**
Ֆինանսական եկամուտ	15	2,045	8,582
Փոխարժեքային տարբերությունից վնաս		(5,146)	(20,017)
Արդյունք մինչև հարկումը		**185,696**	**(230,755)**
Շահութահարկի գծով ծախս		-	-
Տարվա արդյունք		**185,696**	**(230,755)**

1-23 ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Կուտակված արդյունք	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**711,202**	**711,202**
Տարվա արդյունք	(230,755)	(230,755)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**480,447**	**480,447**
Տարվա արդյունք	186,696	186,696
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**666,143**	**666,143**

1-23 ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	185,696	(230,755)
Ճշգրտումներ		
Մաշվածություն և ամորտիզացիա	92,320	91,323
Հիմնական միջոցների օտարումից վնաս	7,651	97,794
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	(91,513)	(99,637)
Ստացված շնորհներից եկամուտ	(1,069,032)	(1,230,901)
Կենսաբանական ակտիվների սկզբնական ճանաչումից օգուտ	(31,344)	(12,735)
Կենսաբանական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից վնաս/(օգուտ)	(16,959)	22,404
Կենսաբանական ակտիվներ անհատույց տրամադրելու հետ կապված ծախսեր	9,289	20,135
Կովերի և հորթերի անկումից ու օտարումից վնաս	28,120	33,308
Ֆինանսական եկամուտ	(2,045)	(8,582)
Անհուսալի ակտիվների դուրսգրում	-	20,557
Փոխարժեքային տարբերությունից վնաս	4,778	20,017
Դրամական միջոցների հոսքեր մինչ շրջանառու կապիտալի փոփոխություններ	**(890,275)**	**(1,277,072)**
Պաշարների նվազում	60,352	36,680
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի նվազում	16,932	10,659
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի նվազում	(9,888)	(11,302)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր նախքան շահութահարկի վճարումը	**(822,879)**	**(1,241,035)**
Որպես շնորհ ստացված դրամական միջոցներ	984,470	1,303,921
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**161,591**	**62,886**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(30,949)	(243,169)
Ավանդների հավաքագրում/(ներդրում)	-	106,806
Ստացված տոկոսներ	2,045	8,582
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(28,904)**	**(127,781)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերի և փոխառությունների մարում, զուտ	-	(4,577)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**-**	**(4,577)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**132,687**	**(69,472)**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(578)	(12,117)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	221,364	302,953
Տարեվերջի դրությամբ դրամական միջոցները և նրանց համարժեքները	**353,473**	**221,364**

1-23 ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 28.06.2024 16:48